ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2023 թվականի հուլիսի 13-ի թիվ 3 որոշմամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը «**ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ**-23/27»

Դատական դեպարտամենտի կարիքների համար պատճենահանման մեքենաների, գունավոր տպիչների և ցանցային երթուղագծիչների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/27» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 12.07.2023թ. ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ 13.07.2023թ. տրամադրված պարզաբանումը՝

<u>Հարցադրում</u>

«Հարգելի պատվիրատու, 4-րդ չափաբաժնի՝ գունավոր տպիչների տեխնիկական բնութագրում տրված են պարամատրեր, որոնք լիովին համապատասխանում են համապատասխան մակնիշի տպիչի, բացառությամբ քարթրիջների ռեսուրսի՝ մասնավորապես գունավոր քարթրիջների ռեսուրսի մասին է խոսքը: Խնդրում ենք տալ պարզաբանում՝ արդյոք «առնվազն 1300 էջ» վերաբերում է նաև գունավոր քարթրիջներին: Կանխավ շնորհակալություն»:

<u>Պարզաբանում</u>

««ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/27» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծին (Հավելված 5) կից ներկայացված տեխնիկական բնութագրով՝ 4-րդ չափաբաժնի (գունավոր տպիչների) մասով հստակ սահմանված է, որ գունավոր տպիչների քարթրիջներից յուրաքանչյուրի ռեսուրսը պետք է լինի առնվազն 1300 էջ:

Միաժամանակ, «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/27» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում գնման առարկա հանդիսացող ապրանքների տեխնիկական բնութագրերը սահմանելիս պատվիրատուի կողմից այդ տեխնիկական բնութագրերում որևէ մակնիշի ապրանքի տեխնիկական բնութագրիչներ ներառելու մոտեցում չի կիրառվել»:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/27» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Աիդա Հովհաննիսյանին:

Հեռախոս՝ 010 511-774:

Էլեկտրոնային փոստ՝ ddgnumner@mail.ru:

«ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/27» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով: